# ԱՖՐԻԿՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՍԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԾ ԽԱՂԻ ՀԱՅԵԼՈՒՄ

*Սերգեյ Գրինյան՝, Գագիկ Հարությունյան՝՝*

2010թ. սկզբին տրվեց փոխակերպման հզոր գործընթացների մեկնարկն աֆրիկյան աշխարհամասում: «Քաղաքակիրթ աշխարհի» մեծ մասի համար Աֆրիկան վերստին բացահայտվեց Յոհանեսբուրգում ֆուտբոլի աշխարհի առաջնությունից հետո, որը ՀԱՀ բերեց ոչ միայն զբոսաշրջիկների, այլև համաշխարհային ԶԼՄ-ի ուշադրությունը բևեռեց Աֆրիկայի և նրա հիմնախնդիրների վրա:

Սակայն իրենց հանդեպ առանձնակի հետաքրքրություն են առաջացրել վերջին իրադարձությունները Եգիպտոսում, որոնք հանգեցրին քաղաքական գծի փոփոխման աֆրիկյան այդ առանցքային երկրում: Այդ իրադարձությունները շատ բանով վճռորոշ են ողջ աշխարհամասի ճակատագրի համար. իզուր չէ, որ դեռ նախապատմական ժամանակաշրջանում Եգիպտոսն անվանում էին «Աֆրիկայի դարպաս»:

Փորձենք պարզել, թե ինչ կա այդքան բուռն իրադարձությունների հետևում, որոնք ցունամիի նման փոթորկեցին «սև» աշխարհամասը:

## *Աֆրիկան արդի աշխարհի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական քարտեզներին*

XXI դարասկզբին երկրագնդի վրա գլոբալացման գործընթացներում իրապես չընդգրկված միայն երկու աշխարհամաս էր մնացել՝ Աֆրիկան և Անտարկտիդան: Եվ եթե երկրորդի արդյունաբերական յուրացումն ուշանում էր աշխարհագրական հեռավորության և դաժան կլիմայի պատճառով, ապա Աֆրիկայի երկրորդ գաղութացումը, ըստ էության, ժամանակի խնդիր էր:

«Սև» աշխարհամասը զբաղեցնում է 30,3 մլն կմ$^2$ տարածք: Հյուսիսից հարավ երկարությունը 8 հազ. կմ է, արևմուտքից արևելք՝ հյուսիսային մասում՝ 7,5 հազ. կմ[1]:

---

՝ Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնի գլխավոր տնօրեն, տեխ. գիտ. դոկտ.:

՝՝ «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն:

[1] http://ru.wikipedia.org/wiki/%D0%90%D1%84%D1%80%D0%B8%D0%BA%D0%B0#.D0.9F.D0.BE.D0.BB.D0.B5.D0.B7.D0.BD.D1.8B.D0.B5_.D0.B8.D1.81.D0.BA.D0.BE.D0.BF.D0.B0.D0.B5.D0.BC.D1.8B.D0.B5

Որպես հանքահումքային աղբյուր Աֆրիկան հայտնի է, նախևառաջ, ալմաստի (ՀԱՀ, Զիմբաբվե) և ոսկու (ՀԱՀ, Գանա, Մալի, Կոնգոյի Հանրապետություն) հարուստ հանքավայրերով: Նավթով հարուստ հանքավայրեր կան Նիգերիայում և Ալժիրում: Բոքսիտ արդյունահանվում է Գվինեայում և Գանայում: Ֆոսֆորիտների, ինչպես նաև մանգանի, երկաթի և կապարի ու ցինկի հանքավայրեր կան Աֆրիկայի հյուսիսային ափամերձ գոտում (*տե՛ս Նկ. 1*):

*Նկար 1*

Աֆրիկայի հանքային ռեսուրսները
(աղբյուրը՝ http://baigigitov.narod.ru/kartu.htm)




Պատմականորեն այնպես է ստացվել, որ կլիմայի առանձնահատկություններից ելնելով՝ աշխարհամասն արդյունաբերական հասարակության էքսպանսիայի սահմաններից դուրս է մնացել: Բայց ոչ՝ զարգացած արևմտյան պետությունների ուշադրությունից: Սկսած XVI դարից՝ աֆրիկյան աշխարհամասը հայտնվեց գաղութացման աղացում:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Աֆրիկան սկսեց արագ թափով ապագաղութացվել: Աֆրիկայի տարի (առավել մեծ թվով գաղութների ազատագրման տարի) հայտարարվեց 1960 թվականը, երբ անկախություն ձեռք բերեց 13 պետություն: Այսօր դրանց թիվը հասել է 37-ի (*տե՛ս Նկ. 2*): Դրանց մեծ մասը ֆրանսիական գաղութներ էին և Ֆրանսիայի կառավարման

ներքո գտնվող ու ՄԱԿ խնամարկյալ տարածքներ. Կամերուն, Տոգո, Մալագասիի Հանրապետություն, Կոնգո (նախկին Ֆրանսիական Կոնգո), Դագոմեա, Վերին Վոլտա, Փղոսկրի ափ, Չադ, Կենտրոնաաֆրիկյան Հանրապետություն, Գաբոն, Մավրիտանիա, Նիգեր, Սենեգալ, Մալի: Անկախ հռչակվեցին Աֆրիկայի բնակչության թվով ամենամեծ երկիրը՝ Նիգերիան, որը պատկանում էր Մեծ Բրիտանիային, և տարածքով ամենամեծ երկիրը՝ Բելգիական Կոնգոն: Բրիտանական Սոմալին և Իտալիայի կառավարման տակ գտնվող Սոմալին միավորվեցին և դարձան Սոմալիի Դեմոկրատական Հանրապետություն:

*Նկար 2*

*Աֆրիկայի քաղաքական քարտեզը*
*(աղբյուրը՝http://baigigitov.narod.ru/kartu.htm)*




Կապված այն բանի հետ, որ աֆրիկյան պետությունների սահմանները «Աֆրիկայի համար մրցավազքի» ժամանակ արհեստականորեն անցկացվեցին, հաշվի չառնելով տարբեր ժողովուրդների և ցեղերի տարաբնակությունը, ինչպես նաև այն, որ աֆրիկյան ավանդական հասարակությունը պատրաստ չէր կառավարման դեմոկրատական ձևերին, աֆրիկյան շատ երկրներում անկախություն ձեռք բերելուց հետո քաղաքացիական պատերազմներ սկսվեցին: Շատ երկրներում իշխանության եկան դիկտատորներ: Դրա արդյունքում ձևավորված վարչակարգերն աչքի են ընկնում նրանով, որ ոտնահարում են մար-

դու իրավունքները, բյուրոկրատական են, տոտալիտար, ինչն, իր հերթին, հանգեցնում է տնտեսության ճգնաժամի և աճող աղքատության:

Պետական սահմաններն աֆրիկյան աշխարհամասում Մեծ Բրիտանիայի և նրա դաշնակիցների վարած հետգաղութային քաղաքականության իրականացման բազմաթիվ օրինակներից մեկն են: Դրա էությունը հետևյալն է: Հասկանալով, որ քաղաքական վերադասավորման օբյեկտիվ գործընթացները, դրանց դինամիկան թույլ չեն տալիս լրիվ վերահսկողություն պահպանել գաղութների տարածքների նկատմամբ, Մեծ Բրիտանիայի ղեկավարությունն «ինքնիշխանության հռչակման» որոշում է ընդունում:

Բուն իրավիճակի մասին տեղեկատվությանը տիրապետելով և հստակ պատկերացնելով իր նախկին գաղութների կոնֆլիկտային պոտենցիալը՝ Մեծ Բրիտանիան, «փորձով իմաստնացած» քաղաքական խորհրդականի իրավունքով, ակտիվորեն մասնակցում է անկախ երկրների նոր պետականության կերտմանը: Ահա հենց այստեղ էլ ի հայտ է գալիս Մեծ Բրիտանիայի գաղութային քաղաքականության ողջ հմտությունը. պետական սահմանները ձևավորվում են այնպես, որ շատ տասնամյակներ (եթե ոչ ավելի) պահպանվում կամ նորից ձևավորվում է հակամարտությունների թաքնված պոտենցիալը, որը, դրսից աննշան ճնշման պարագայում, կարող է ցանկացած պահի թաքուն վիճակից վերածվել պառակտիչ պատերազմի հանգեցնող թեժ հակամարտության: Նման քաղաքականություն իրականացվել է Իսրայելի և Պաղեստինի, Հնդկաստանի և Պակիստանի հարաբերություններում, մասամբ՝ Միջին Ասիայում: Եվ առավել չափով՝ Աֆրիկայում:

Այսպիսով, արդի հակամարտությունների մեծամասնությունն աֆրիկյան աշխարհամասում նախապես ծրագրված էր «լուսավորյալ Արևմուտքում», նրա համար, որ միշտ իր գաղութները վերադառնալու պատրվակ լինի հակամարտող կողմերին «հնազանդեցնելու առաքելության» դրոշի ներքո:

Եվ ահա XXI դարասկզբին, որի բնութագրական գծերը դարձան Արևմտյան քաղաքակրթության՝ բազմամյա ֆինանսատնտեսական ճգնաժամի վերածված ֆինանսատնտեսական խոր ցնցումները, ինչպես նաև միջդավանական հակամարտության աճը, այդ ժամը եկել է:

## *Անդրազգային կորպորացիաների մրցակցային պայքարը հանուն Աֆրիկայի*

Մինչև XXI դարասկիզբը Աֆրիկան՝ որպես հումքի աղբյուր, առանձնակի հետաքրքրություն էր ներկայացնում անդրազգային կորպորացիաների (ԱԱԿ) համար, հումք, որը մատակարարվում էր չնչին գնով: Նման հետաքրքրությունը, մի կողմից՝ տանում էր դեպի անբարեխիղճ մրցակցությամբ հրահրված ներքին հակամարտությունների սրացում, բայց մյուս կողմից՝ թույլ էր

տալիս համեմատական «անդորր» պահպանել, քանի որ յուրաքանչյուր ԱԱԿ, իր համար ապահովելով պահանջվող հումքի հասանելիությունը, հանդարտվում էր: ԱԱԿ-ների պայքարն Աֆրիկայում առավել ցայտուն է երևում Կոնգոյում և հարևան Ռուանդայում տիրող իրավիճակներով:

Արևմուտքի արդյունաբերական տնտեսության բուռն զարգացումը նորանոր ռեսուրսներ էր պահանջում: Դրանցից մեկի՝ կոլտանի մասին լավ է գրված «Արյուն բջջայինում» հոդվածում («*Кровь в мобильном»*[1]*),* որում հեղինակն արդարացիորեն մատնանշում է հետևյալ հետաքրքիր փաստերն Աֆրիկայի երկրներից մեկի՝ Կոնգոյի հետ կապված: Կոնգոն երկրագնդի ռեսուրսներով հարուստ պետություններից մեկն է համարվում, մինչդեռ բնակչությունը եզրափակում է աղքատության ցուցակը:

Մենք բոլորս օգտվում ենք բջջային հեռախոսներից: Տարեկան մինչև կես միլիարդ նման հեռախոս է վաճառվում, և դրանցից յուրաքանչյուրում օգտագործված է կոլումբո-տանտալիտ, որն ստացվում է կոլտանի հանքից: Կոլտանի համաշխարհային պաշարների 80%-ը գտնվում է հենց Կոնգոյում: Եվ դա՝ չհաշված այն, որ այստեղ են գտնվում ալմաստի համաշխարհային պաշարների մեկ երրորդը, կոբալտի պաշարների գրեթե կեսը, ուրանի պաշարների մեկ քառորդը, ինչպես նաև նավթի, պղնձի, ոսկու և արծաթի զգալի թվով հանքավայրեր: Աշխարհի հարստագույն պետություններից մեկը կարող էր իրեն թույլ տալ ունենալ, գոնե, Էմիրությունների կենսամակարդակը: Բայց կա *America Mineral Fields Inc.* ընկերությունը, կան նաև *Nokia*-ն*, Siemens*-ը, ինչպես նաև *Cobatt*-ը (ԱՄՆ), *H.C. Starck*-ը (Գերմանիա), *Ningxia*-ն (Չինաստան) և էլի ուրիշներ...

Գրեթե 50 տարի Կոնգոյում չի դադարում և՛ «Կոնգոյի քաղաքացիական», և՛ «երկրորդ աֆրիկյան», և՛ համաշխարհային կոլտանային» կոչվող պատերազմը:

Կոլտանի մատակարարումների սխեման խիստ բարդ է[2]: Կոնգոցի հանքափորները ձեռքով են արդյունահանում կոլտանը և այն հանձնում են մանր դիլեր-վերագնողներին: Սրանք, իրենց հերթին, մասնավոր ինքնաթիռներ են վարձում Ուկրաինայից և Ռուսաստանից, որոնք անմշակ հանքանյութը տեղափոխում են հարևան երկրներ (գլխավորապես Ռուանդա): Այնուհետև Կոնգոյից հանված բեռը կառավարական ընկերությունների (որոնք պատկանում են Ռուանդայի կամ Ուգանդայի նախագահների հարազատներին) միջոցով հասցվում է Եվրոպա: Այստեղ հիմնական դեր են խաղում արդեն բելգիական ընկերությունները: Բեռների մեծ մասը հասցվում է Օստենդի օդանավակայան (փոխաբեռնման կետ), այստեղից հակառակ ուղղությամբ ինքնաթիռներն արդեն զենք են տանում, իսկ կոլտանը ինչ-որ տեղ Կիպրոսում գրանցված ընկե-

[1] http://commons.com.ua/archives/8523.

[2] Նույն տեղում:

րությունների միջոցով հասցվում է վերամշակող գործարաններին: Դրանք շատ չեն, բայց դրանց տերերը, ըստ էության, Կոնգոյի պատերազմը հովանավորողներն են. *Cobatt* (ԱՄՆ), *H.C. Starck* (Գերմանիա), *Ningxia* (Չինաստան) և Ղազախստանի Ուստ Կամենոգորսկի վերամշակող գործարան:

## *Աֆրիկայի զարգացման չինական վեկտորը*

Իրավիճակն սկսեց սկզբունքայնորեն փոխվել XXդ. վերջից, երբ աշխարհաքաղաքական հորիզոնում հստակ ուրվագծվեց նոր Չինաստանը: Աշխարհի առաջատար վերլուծաբանական կենտրոնների վերլուծաբանները կանխատեսել են, որ առաջիկա տարիներն անցնելու են Չինաստանի զարգացման նշանի տակ:

Խորհրդային ղեկավարության հեռատես քաղաքականությունը, որն անցկացվում էր XXդ. երկրորդ կեսին, հանգեցրեց նրան, որ ԽՍՀՄ-ը, Կուբայի, ԳԴՀ-ի և Հարավսլավիայի աջակցությունն ունենալով, դե-ֆակտո դարձավ առաջատարն աֆրիկյան աշխարհամասում: Սակայն ԽՍՀՄ փլուզումը հանգեցրեց աշխարհաքաղաքական վակուումի ձևավորման, որը, անշուշտ, չէր կարող բավական երկար պահպանվել. աֆրիկյան գործերում այլ խաղացողներ հայտնվեցին, որոնց մեջ ԽՍՀՄ-ի տեղը զբաղեցրեց Չինաստանը (*տե՛ս Նկ. 3*):

*Նկար 3*

*Ռուսաստանը և Չինաստանն Աֆրիկայում*
*(աղբյուրը՝ http://www.krasrab.com/archive/2010/11/09/07/view_article)*



Իրավիճակն սկսեց ավելի եռանդուն փոխվել XXIդ. առաջին տասնամյակում: Այսպես, 2008թ. ոչ միայն ամերիկյան հետախուզության կանխատեսող ծառայությունները, այլև արևմտյան երկրների վերլուծաբանական շատ այլ կենտրոններ տագնապահար հայտարարեցին, թե արդեն 2025թ. Չինաստանը կարող է աշխարհում երկրորդ տեղը դուրս գալ տնտեսական և ռազմական հզորությամբ, իսկ ևս 20 տարի անց կարող է առաջինը լինել[1]:

Զարգացող տնտեսությանը ռեսուրսներ են պետք: Չինաստանն այսօր հայտնվել է խիստ լուրջ և պատասխանատու ընտրության առջև. այս երկիրը պետք է կողմնորոշվի սեփական զարգացման հանգուցային վեկտորի հարցում: Բայց նրա համար այդ վեկտորներն այդքան էլ շատ չեն:

Մի վեկտորը Հարավարևելյան Ասիան և Օկեանիան են: Բավական հեռանկարային ուղղություն, որը, սակայն, կարող է ՉԺՀ-ին հակամարտության մեջ գցել ոչ միայն Ճապոնիայի ու ԱՄՆ-ի, այլև Մեծ Բրիտանիայի հետ, որն իր սեփական շահերն ունի Բրիտանական համագործակցության երկրներում: Նման մրցակցությունն այսօր Չինաստանի համար առայժմ անհնար է:

Մյուս վեկտորը Սիբիրն ու ռուսական Հեռավոր Արևելքն են: Սա շատ հրապուրիչ ուղղություն է, որը նավթն ու գազը հասանելի կդարձնի չինական տնտեսության համար: Սակայն այստեղ էլ էական հիմնախնդիրներ են ծագում (վատ կլիմայի հետ միասին), որոնք այսօր Չինաստանն ամբողջ ծավալով լուծել չի կարող, թեև հաջողությամբ իրագործվում է դեպի ռուսական տարածքներ փափուկ էքսպանսիայի ծրագիրը:

Երրորդ վեկտորն Աֆրիկան է:

Ինչպես իր հոդվածում (որը ներկայացնում է Չինաստանի արտաքին քաղաքականությունում աֆրիկյան վեկտորի զարգացման առավել ամբողջական վերլուծությունը) նշում է ռուս հայտնի գրող Ռոյ Մեդվեդևը[2], Չինաստանի քաղաքական համագործակցությունն աֆրիկյան շատ երկրների հետ, որպես հակաիմպերիալիստական պայքարի գծով դաշնակիցներ, զարգացել է դեռ 1960-1970-ական թթ.:

90-ականների կեսերից գլխավոր շեշտը սկսեց փոխադրվել Չինաստանի և Աֆրիկայի տնտեսական համագործակցության վրա: Դեռ 1996թ. տեղի ունեցավ ՉԺՀ փոխվարչապետերի երեք շրջագայություն Աֆրիկայի 18 երկրներում: 1996թ. ՉԺՀ նախագահ Զյան Զեմինն այցելեց Քենիա, Եթովպիա, Մալի, Եգիպտոս, Նամիբիա և Զիմբաբվե: 1997թ. մայիսին ՉԺՀ Պետխորհրդի վարչապետ Լի Պենն այցելեց մերձարևադարձային գոտու աֆրիկյան 6 երկիր: Աֆրիկյան երկրների հետ ՉԺՀ ապրանքաշրջանառությունն այդ տարիներին կազմում էր տարեկան մոտավորապես $4 մլրդ: Սա նույնիսկ այն տարիների համար

[1] http://www.csef.ru/studies/politics/projects/china/articles/875/.
[2] http://www.krasrab.com/archive/2010/11/09/07/view_article.

խիստ աննշան թիվ էր՝ չինական արտաքին առևտրի ընդհանուր շրջանառության ընդամենը մոտ 1,5%-ը[1]:

Ռ.Մեդվեդևն իր հոդվածում նշում է, որ արդեն 90-ականների վերջին Չինաստանում մշակվեց Աֆրիկայի երկրների հետ համագործակցության պլան, որը եռանդուն ձևով կենսագործվում էր 2000-2009թթ.: Բավական է ասել, որ 2008թ. սկզբին Չինաստանի ապրանքաշրջանառությունն Աֆրիկայի երկրների հետ հասավ $108 մլրդ-ի: Միայն 2008թ. Չինաստանի ուղղակի ներդրումները Սև աշխարհամասի երկրներում հասան գրեթե $8 մլրդ-ի: Աֆրիկայի հետ առևտրի ծավալներով Չինաստանը 2009թ. զբաղեցրեց երկրորդ տեղն աշխարհում՝ Եվրոպայից հետո: Ընդ որում՝ չին-աֆրիկյան առևտրի ծավալները վերջին 5 տարիներին ավելացան տարեկան 30%-ով: Դեռ 2000-2003թթ. Չինաստանը չեղյալացրեց կամ մասամբ չեղյալացրեց ավելի քան 30 աֆրիկյան երկրների $1,5 մլրդ-ն գերազանցող պարտքը[2]:

Ի տարբերություն արևմտյան երկրների, Չինաստանն Աֆրիկայի պետությունների առջև չի դնում դեմոկրատիայի զարգացման այնպիսի պահանջներ, որոնք այս աշխարհամասի համար դեռ վաղ են և անիրականանալի: Այսպես, այդ երկիրն ակտիվորեն համագործակցում է Սուդանի վարչակարգի հետ՝ ուշադրություն չդարձնելով Սուդանի նախագահ Օմար Բաշիրի ձերբակալության՝ դեռ 2008թ. Միջազգային քրեական դատարանի տված օրդերին: Չինաստանն զգում է Սուդանի նավթային ռեսուրսների կարիքը, որոնք գնահատվում են մոտ 2 մլրդ բարել: Հենց Չինաստանն է այսօր ստանում Սուդանից արտահանվող գրեթե ամբողջ նավթը: Բայց Սուդանում Չինաստանի վարկերով կառուցվում են ոչ միայն նավթատարներ, այլև հիվանդանոցներ, դպրոցներ, ճանապարհներ[3]:

Այս պայմաններում 2010թ. հունվարին Հարավային Սուդանի[4] անկախության համար անցկացված հանրաքվեն լուրջ հարված էր այդ երկրում Չինաստանի շահերին, քանի որ հիմնական նավթահանքերը կենտրոնացած են երկրի հենց հարավում: Բնութագրական է նաև այն, որ Հյուսիսային և Հարավային Սուդանների կոնֆլիկտը, ինչպեսև աֆրիկյան շատ հակամարտություններ, ծրագրված էր այդ երկրի հանդեպ բրիտանական պրոտեկտորատի ժամանակներից[5]:

Ինչպես նշվում է Ռ.Մեդվեդևի հոդվածում, 2007թ. գարնանից Չինաստանն սկսեց Աֆրիկայում իրականացնել «հատուկ տնտեսական գոտիների» ստեղծման մի մեծ նախագիծ: Սույն պարագայում օգտագործվում է նման «գո-

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT_ID=5322.
[5] Նույն տեղում:

տիների» ստեղծման այն փորձը, որը հաջողությամբ կիրառվել է հենց Չինաստանում 1980-1990-ական թթ.: Առաջին «հատուկ գոտին» ստեղծվում է Զամբիայի «Պղնձե գոտում»: Երկրորդը՝ Մավրիկիա կղզում, և այն Չինաստանի համար որպես առևտրային կենտրոն կծառայի, որը պետք է չինական բիզնեսի ավելի քան քառասուն ուղղությունների համար արտոնյալ հնարավորություններ ստեղծի Արևելյան և Հարավային Աֆրիկայի երկրների ընդհանուր շուկայի 21 անդամների առևտրային կառույցները հասանելի դարձնելու համար: Մավրիկիա կղզին Չինաստանի համար ավելի ազատ կդարձնի ելքը Հնդկական օվկիանոս և դեպի հարավարևելաասիական շուկաներ: Երրորդ «գոտին», ինչպես ենթադրվում է, կստեղծվի Տանզանիայի մայրաքաղաք Դար-էս-Սալամում, և այն կդառնա նավագնացության կենտրոն: Եվս երկու «հատուկ գոտի» Չինաստանը նախատեսում էր տեղակայել Արևմտյան Աֆրիկայում, և իրենց երկրում նման գոտի ստեղծելու իրավունքի համար մրցակցում էին Լիբերիան, Նիգերիան և Կանաչ հրվանդանի կղզիները[1]:

Նշվում է նաև, որ դեռ 2009թ. նոյեմբերին Պեկինում անցկացվեց հանգամանալիորեն նախապատրաստված գագաթաժողով, որին մասնակցեցին աֆրիկյան երկրների 48 առաջնորդներ: Ելույթ ունենալով գագաթաժողովում՝ Չինաստանի առաջնորդ Հու Չինտաոն քննադատեց Աֆրիկայում արևմտյան երկրների վարած քաղաքականությունը և խոստացավ արդեն 2009թ. երկու անգամ ավելացնել աֆրիկյան աշխարհամասին ցուցաբերվող օգնությունը: Այդ խոստումը կատարված է: Աֆրիկայի համար բազմամիլիարդանոց ներդրումային ֆոնդ է ստեղծվել, բացի այդ, խոշոր ներդրումներ և վարկեր կտրամադրվեն նաև կոնկրետ երկրների: Օրինակ, Անգոլան, $2 միլիարդ վարկ ստանալով Չինաստանից, կորցրել է հետաքրքրությունը ԱՄՀ վարկերի հանդեպ, որոնք ստանալու համար բազմաթիվ պայմաններ պետք է կատարվեն[2]:

Այսպիսով, XXIդ. սկզբին Չինաստանի արտաքին քաղաքականության զարգացման աֆրիկյան վեկտորը հստակ գործնական մարմնավորում է ձեռք բերել:

## *Համաշխարհային առաջնորդության համար մղվող պայքարն այսօր լուծվում է Աֆրիկայում*

Հասկանալի է, որ Չինաստանի հիմնական աշխարհաքաղաքական մրցակիցը՝ ԱՄՆ-ը, չէր կարող համակերպվել այն բանի հետ, որ չինական տնտեսությունը հզոր խթանիչ ազդեցություն ստանար աֆրիկյան աշխարհամասի հսկայական ռեսուրսների կողմից:

[1] http://www.krasrab.com/archive/2010/11/09/07/view_article.
[2] Նույն տեղում:

*Նկար 4*

*Սոմալիական ծովահենների ակտիվության քարտեզը*
*(աղբյուրը՝ http://www.unitar.org/unosat/)*



Որպեսզի արդարանան Չինաստանի տնտեսության վերելքի վերաբերյալ վերլուծաբանների կանխատեսումները, այդ նույն տնտեսությունը պետք է «սնունդ» ստանա էժան հումքի տեսքով: Իսկ XXIդ. սկիզբը Չինաստանի համար հստակ նշել է նման ռեսուրսների աղբյուրը՝ Աֆրիկան:

Աֆրիկայի համար պայքարի սրացումը սկզբնապես արտահայտվեց այն երևույթով, որ Սոմալիի ափերին XXդ. սկզբին ի հայտ եկան «ծովահեններ»[1,2] (*Նկ. 4*): Ծովահեններն աշխուժացան 2006-2007թթ., այն տարիներին, երբ Չինաստանն ակտիվորեն իրագործում էր Աֆրիկայի յուրացման տնտեսական ծրագիրը:

Ծովահենական այդ «արշավների» բնութագրական գծերը թույլ են տալիս ենթադրել, որ նրանց գործունեությունը վերահսկվում և ուղղորդվում է «ամուր ձեռքով»: Զանգվածային լրատվամիջոցներում լայնորեն լուսաբանված ուկրաինական «Ֆաինա» նավի գավթումը, որը բեռնված էր ծանր սպառազինությամբ, իրականացվեց Օդեսայից սոմալիական ծովահեններին հաղորդված տեղեկատվության հիման վրա[3]: Հետաքրքիր է նաև այն, որ ծովահենների դեմ պայքարի մասին միջազգային օրենսդրության ընդունման հիմնական հակառակորդները ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան են, որոնք արգելակում են այլ երկրների առաջ քաշած համապատասխան նախաձեռնությունները ՄԱԿ մակարդակով[4]:

ԱՄՆ-Չինաստան դիմակայությունում առանձնակի սրություն մտցրին այս երկու տերությունների տարաձայնությունները համաշխարհային արժութային-ֆինանսական համակարգի բարեփոխման հարցի շուրջ, որը դրսևորվեց 2010թ. Սեուլում անցկացված *G20*-ի գագաթաժողովից հետո: Այն ժամանակ երկու մեծ տերությունների տարաձայնությունը վերածվեց նրանց դոմինիոնների «թեժ» դիմակայության Կորեական թերակղզում: Այս համատեքստում ակնհայտ է, որ այն իրադարձությունները, որոնք տեղի ունեցան աֆրիկյան մի շարք պետություններում 2011թ. հունվարին, աշխարհում առաջատարի դերի համար ԱՄՆ և Չինաստանի պայքարի արտացոլումն էին:

Վերն արդեն նշվել է, որ իրադարձությունները Սուդանում նպաստեցին ԱՄՆ դիրքերի ամրապնդմանն այդ երկրում և Չինաստանի ազդեցության նվազմանը երկրի նավթով հարուստ շրջաններում:

Ճիշտ նույն կերպ էլ նաև Եգիպտոսի հուզումներն էին այդ երկու երկրների պայքարի արդյունքը: Ընդ որում՝ Եգիպտոսի հետ կապված իրավիճակում Չինաստան-ԱՄՆ կոնֆլիկտին զումարվեցին նաև տարածաշրջանային լարվածության (նախևառաջ Իսրայելի և Իրանի միջև) հետևանքները:

[1] http://www.iimes.ru/rus/stat/2010/26-05-10.htm.
[2] http://badnews.org.ru/news/kto_rukovodit_somalijskimi_piratami/2010-05-19-1210.
[3] http://www.newsru.com/world/13feb2009/pirates.html.
[4] http://blog.i.ua/user/3169528/512534/.

Իրանի շուրջ իրավիճակի սրացումն Իսրայելից պահանջեց սահմանակից երկրներում իրավիճակն ամրապնդելու միջոցներ ձեռնարկել: Այս համատեքստում Մուբարաքի ռեժիմը Եգիպտոսում չէր համապատասխանում Իսրայելի շահերին, և եթե իրավիճակն Իրանի շուրջ հետագայում բարդանար, այս ուղղությամբ Իսրայելին վտանգ կսպառնար:

## *Ամփոփում*

Եգիպտոսի իրադարձությունների օրինակով մենք դարձանք համաշխարհային շախմատի տախտակի վրա ընթացող Մեծ խաղի իրականացման վկաները:

Այն, որ Ռուսաստանի նախագահի այցը Իսրայել 2011թ. հունվարին խափանվեց, նույնպես այդ խաղի տարրն էր, և իսրայելցի դիվանագետների գործադուլի դերն այստեղ նվազագույնն է: Պարզապես տարածաշրջանի համար կարևոր իրադարձությունների նախօրեին ռուս առաջնորդի՝ մեծ ԽՍՀՄ-ի ժառանգորդի ներկայությունը տարածաշրջանի առանցքային երկրներից մեկում՝ պաշտոնական այցով, «դիրիժորներն» աննպատակահարմար համարեցին:

Տեղի ունեցող իրադարձությունների սրությունը և դինամիզմը հերթական անգամ ցույց են տալիս այն, որ իրավիճակն աշխարհում լարված է, ինչպես նաև այն, որ չկա ստեղծված ծանր իրավիճակից դուրս գալու հստակ պլան:

Մենք դարձյալ համոզվեցինք, որ աշխարհը կանգնած է արմատական աշխարհաքաղաքական փոխակերպումների շեմին. կարելի է համոզված լինել, որ Չինաստանն անուշադիր չի գտնվի Եգիպտոսում տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ և ամենամոտ ժամանակներս կպատրաստի դրանց տալիք պատասխանը: Արդյո՞ք դա կլինի իշխող ռեժիմների տապալումը տարածաշրջանի ԱՄՆ արբանյակ երկրներում (նախևառաջ Սաուդյան Արաբիայում), թե՞ պատասխանն ավելի նուրբ կլինի և կտրվի երկրագնդի այլ տարածաշրջանում. դրա մասին կիմանանք ամենամոտ ժամանակներս:

***Մարտ, 2011թ.***

# СОБЫТИЯ НА АФРИКАНСКОМ КОНТИНЕНТЕ В ЗЕРКАЛЕ БОЛЬШОЙ ИГРЫ

*Сергей Гриняев, Гагик Арутюнян*

Резюме

На примере событий в Египте мы стали свидетелями реализации Большой игры на мировой шахматной доске. То, что визит российского президента в Израиль в январе 2011г. был сорван, – это элемент той же игры, и роль забастовки израильских дипломатов тут минимальна. Просто накануне важнейших для региона событий присутствие российского лидера – наследника великого СССР – с официальным государственным визитом в одной из ключевых стран региона было сочтено «дирижерами» нецелесообразным.

Острота и динамизм происходящих событий в очередной раз показывают усилившуюся напряженность в мире, а также отсутствие четкого плана по выходу из сложившейся тяжелой ситуации. Мы вновь убедились, что мир стоит на грани кардинальных геополитических трансформаций: можно быть уверенными, что Китай не оставит без внимания происходящие в Египте события и подготовит свой ответ на них в самое ближайшее время. Будет ли это свержение правящих режимов в сателлитах США в регионе (прежде всего в Саудовской Аравии) или ответ будет тоньше и последует в другой части планеты – это мы узнаем в самое ближайшее время.